**Հաշվետվություն**
**ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի միջազգային իրավական հարաբերությունների վարչության կողմից**
**2013թ. ընթացքում կատարված աշխատանքների (ըստ վարչության բաժինների)**

***– 2013 թվականի ընթացքում վարչության եվրոինտեգրման և զարգացման բաժնի համակարգմամբ իրականացված աշխատանքների մասին***

2013 թվականը ՀՀ արդարադատության նախարարության համար կարևորվում է տարածաշրջանային երկկողմ և բազմակողմ համագործակցության ամրապնդմանն ուղղված մի շարք փոխայցելությունների, դրանց արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների և փոխանակված փորձի առումով:

2012թ. սեպտեմբերի 19-22-ը ԱՊՀ արդարադատության նախարարների խորհրդի 7-րդ նիստի արդյունքում ընտրվելով ԱՊՀ արդարադատության նախարարների խորհրդի նախագահ, ՀՀ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը 2013թ. հոկտեմբերի 11-ին Երևանում դեկավարեց Խորհրդի 8-րդ հերթական նիստը՝ Խորհրդի պատասխանատու քարտուղարի, Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Ղրղզստանի և Տաջիկստանի արդարադատության նախարարությունների պատվիրակությունների մասնակցությամբ: Ռուսաստանի և Բելառուսի պատվիրակությունները դեկավարում էին այդ պետությունների արդարադատության նախարարները, որոնց հետ առանձին հանդիպումների արդյունքում ձեռք բերվեցին երկկողմ համագործակցության բարելավմանն ուղղված մի շարք պայմանավորվածություններ:

2013 թվականի հունիսի 5-7-ը Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարար Ա. Կոնովալովի հրավերով ՀՀ արդարադատության նախարար Հ. Թովմասյանի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այցով գտնվել է՝ Մոսկվայում: Աշխատանքային այցի հիմնական նպատակն էր՝ ամրապնդել և խորացնել երկկողմ համագործակցությունը: Պատվիրակությունը, որի կազմում են եղել ՀՀ արդարադատության նախարարի տեղակալներ Արամ Օրբելյանն ու Եղիշե Կիրակոսյանը, հունիսի 6-ին հանդիպել է ՌԴ արդարադատության նախարար Ա. Կոնովալովի, Գերագույն դատարանի նախագահ Վ. Լեբեդևի, Նոտարական պալատի նախագահ Մ. Սազոնովայի, ինչպես նաև համակարգի մի շարք այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ:

Երկկողմ համագործակցության շրջանակներում կարևորվում է նաև ՀՀ արդարադատության նախարարության հրավերով Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ցուլուկիանի գլխավորած պատվիրակության 2013 թվականի հունիսի 16-18 պաշտոնական այցը Երևան: Իրենց պետություններում դատաիրավական բարեփոխումները որպես առաջնահերթություն ամրագրած արդարադատության նախարարների հանդիպումը կարևորվեց տվյալ ոլորտում փորձի փախանակմամբ, իրավական փոխօգնության պայմանագրերի կատարմանն ուղղված խնդիրների վերացման և բարիդրացիական

հարաբերությունները էլ ավելի զարգացնելու համար պայմանավորվածությունների ձեռք բերմամբ։

2013 թվականին Հայաստանի Հանրապետությունը նախագահում էր նաև Եվրոպայի Խորհրդի Նախագահների կոմիտեում, որով և պայմանավորված էին մի շարք ընդունելություններն ու տարբեր խորհրդաժողովներին ՀՀ արդարադատության՝ նախարարի ղեկավարած պատվիրակության մասնակցությունը՝

Մ.թ. հուլիսի 3-5-ը Երևանում տեղի ունեցած «Իրավունքի գերակայության եվրոպական չափանիշները և իշխանությունների հայեցողության սահմանները Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում» վերտառությամբ համաեվրոպական խորհրդաժողովին ՀՀ արդարադատության նախարարության հրավերքին ի պատասխան Հայաստան են ժամանել Լատվիայի Հանրապետության, Ալբանիայի Հանրապետության, Լիտվայի Հանրապետության, Սերբիայի Հանրապետության, Չեխական Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Վրաստանի արդարադատության նախարարության պատվիրակությունները։ Լատվիայի Հանրապետության պատվիրակությունը ղեկավարում էր նախարար Յանիս Բորդանսը։ ՀՀ արդարադատության նախարարության կողմից բոլոր պատվիրակությունների համար կազմակերպվեցին առանձին ընդունելություններ, որոնց արդյունքում ձեռք բերվեցին իրավական համագործակցության զարգացմանն ուղղված պայմանավորվածություններ։

ԵԽ մասնակից պետությունների հետ համագործակցության շարքում կարևորում ենք նաև 2012թ. հոկտեմբերին ՀՀ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանի գլխավորած պատվիրակության Էստոնիա այցին հաջորդած Էստոնիայի արդարադատության նախարարության պատվիրակության պաշտոնական այցը Երևան ս.թ. մայիսի 19-ից 22-ը։ Այցն իրենից ներկայացնում էր Տալինում տեղի ունեցած հանդիպումների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների իրագործում, որը հնարավորություն տվեց Էստոնիայի էլեկտրոնային կառավարության, ինչպես նաև արդարադատության նախարարության տարբեր ոլորտներում իրականացվող ծրագրերին ծանոթացած ՀՀ արդարադատության նախարարությանը ներկայացնելու նաև իրենց ձեռքբերումները դատական և իրավական ոլորտի բարեփոխումների արդյունքում։

2013 թվականի նոյեմբերի 6-9-ը ՀՀ արդարադատության նախարարի ղեկավարությամբ և նախարարի տեղակալ Արամ Օրբելյանի մասնակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության պատվիրակությունը գործուղվել է Բելգրադ (Սերբիայի Հանրապետություն)՝ Եվրոպայի խորհրդի անդամ երկրների լրատվամիջոցների և տեղեկատվական հասարակության հարցերով պատասխանատու նախարարների խորհրդաժողովին մասնակցելու համար։ Խորհրդաժողովը ղեկավարել է ՀՀ արդարադատության նախարարը։

ՀՀ արդարադատության նախարարի կողմից ընդունելություններ են կազմակերպվել Միջազգային կազմակերպությունների մի շարք բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար, որոնց թվում հատկանշական են հանդիպումները Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի նորանշանակ ներկայացուցիչ պարոն Քրիստոֆ

Բիերուիրթի, ԵԽ մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուիժնիեկսի, ԵԽ նախարարների կոմիտեի ժողովրդավարության հարցերով զեկուցողների խմբի նախագահ տիկին Ուրսուլա Գաչեկի գլխավորած պատվիրակության, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում գործառնությունների ղեկավար Լորան Կորբանի, ԵԽ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (CPT) պատվիրակության հետ:

Նախարարության կողմից համակարգվել են նաև Խոշտանգումների կանխարգելման գծով CPT, CAT, SPT կոմիտեների գնահատողական այցերը Հայաստանի Հանրապետություն:

2013 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Եղիշե Կիրակոսյանի կողմից արդյունավետ աշխատանքներ են իրականացվել ՄԱԿ-ի Միջազգային առևտրի իրավունքի հանձնաժողովի ողջ տարվա ընթացքում պարբերաբար տեղի ունեցած աշխատանքային հանդիպումների ընթացքում Հայաստանի Հանրապետության պատշաճ մասնակցությունն ապահովելու ուղղությամբ:

2013 թվականի սեպտեմբերի 23-25-ը Փարիզ տեղի ունեցած Տնտեսական համագործակցության և զարգացման Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի «Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան» 12-րդ մոնիթորինգի նիստի՝ ղեկավար խմբի 15-րդ հանդիպմանը մասնակցությամբ պարոն Կիրակոսյանի կողմից ներկայացվել և բարձր գնահատականի է արժանացել Հայաստանի Հանրապետության կողմից որդեգրված հակակոռուպցիոն ռազմավարությունն ու դրա արդյունքում ձեռք բերված հաջողությունները:

2013 թվականի ձեռք բերումներից են նաև հետևյալ միջազգային պայմանագրերի նախագծումն ու օրենքով սահմանված ընթացակարգերի իրականացումը՝

- Եվրոպայի Միության հետ բանակցված «Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին – II փուլ» 29 մլն. եվրո բյուջետային աջակցություն նախատեսող համաձայնագրի կնքումը, որն անցել է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող ներքին ընթացակարգերը և ներկայացվել ՀՀ Նախագահի հաստատմանը,
- ԱՄՆ Զարգացման գործակալության և Հայաստանի Հանրապետության միջև առավել մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարման զարգացմանն ուղղված համագործակցության համաձայնագրի կնքումը, որը հաստատվել է ՀՀ Նախագահի կողմից և ներքին ընթացակարգերն ավարտված լինելու մասին ծանուցագիրը փոխանցվել է ամերիկյան կողմին,
- ԱՄՆ Դեսպանատան հետ համաձայնեցված աջակցությունը ՀՀ գլխավոր դատախազությանը- 250 հազ ԱՄՆ դոլար և բանակցությունները լրացուցիչ համաձայնագրի ստորագրման շուրջ 500 հազ դոլարի չափով, որում ՀՀ արդարադատության նախարարության մասով գումարներն ուղղվում են քրեակատարողական ծառայության բարեփոխմանը,
- Միջազգային մասնավոր իրավունքի մասին Հաագայի խորհրդաժողովում Հայաստանի Հանրապետության անդամակցության հայտին տրված ընթացքը, որի կանոնավոր

անցկացման դեպքում, Հայաստանի Հանրապետությունը կհրավիրվի մասնակցելու Հաագայի խորհրդաժողովի՝ 2014թ. մարտի վերջին կամ ապրիլի սկզբին կայանալիք տարեկան համաժողովին և արդյունքում կստանա թույլատվություն անդամակցելու միջազգային մասնավոր իրավունքի գծով կարևորագույն դեր ունեցող միջազգային կազմակերպությանը, - Իրավական ոլորտում համագործակցության (քաղաքացիական, քրեական գործերով փոխադարձ օգնություն, հանձնում, դատապարտյալների փոխանցում) միջազգային երկկողմ պայմանագրերի բանակցություններ են վարվել ՀՀ ԱԳ նախարարության համակարգմամբ Լիբանանի, Հորդանանի, Հնդկաստանի, Ավստրիայի արդարադատության նախարարությունների հետ, իսկ պայմանագրեր կնքելու նոր առաջարկներ ստացվել են Չինաստանի Ժողովրդական Հանրապետության և Քուվեյթի Պետության կողմից, որոնց հետ կնքվելիք պայմանագրերն այժմ գտնվում են լրամշակման և ներքին համաձայնեցման փուլում: ՀՀ արդարադատության նախարարությունը 2013 թվականի ընթացքում ակտիվ մասնակցություն է ունեցել ՀՀ ԱԳ և էկոնոմիկայի նախարարությունների համակարգմամբ իրականացվող Եվրոպայի Միության հետ ԵՀՔ շրջանակներում Հայաստանի Հանրապետության համագործակցության իրականացման ողջ գործընթացում: Անմիջական աշխատանքներ են տարվել նաև մարդու իրավունքների գծով ՄԱԿ-ի մի շարք մասնագիտացված մարմինների ներկայացուցչությունների, ինչպես նաև ԵԽ հայաստանյան գրասենյակի միջև:

Ըստ աշխատանքային ծրագրի կետերի հաշվետու ժամանակահատվածում բաժնում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1-ին կետ՝

ա) «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքին համապատասխան ՀՀ միջազգային պայմանագրերի վերաբերյալ կարծիքների նախագծերի տրամադրում – 524,

բ) «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքին համապատասխան ստորագրված միջազգային պայմանագրերը ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու կամ դրանցում ՀՀ նոր օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտ ընդունելու անհրաժեշտության կամ դրաբացակայության մասին տեղեկանքների ներկայացում ՀՀ ԱԳՆ – 113.

2-րդ կետ՝

ա) Միջազգային պայմանագրերի վերաբերյալ վերապահում, հայտարարություն, այդ պայմանագիրն արդեն իսկ ստորագրած մյուս կողմի վերապահման, հայտարարության դեմ առարկության նախագծի տրամադրում կամ դրանց վերաբերյալ համաձայնությունների նախագծի տրամադրում – 7:

բ) ՀՀ արդարադատության նախարարի իրավաբանական կարծիքի նախագծի պատրաստում –26.

3-րդ կետ

Իրավական համագործակցության բնագավառում նախընտրելի պետությունների շրջանակի ուսումնասիրում –68.

4-րդ կետ՝

Այլ ընթացիկ աշխատանք – 356.

5-րդ կետ՝

Չպլանավորված աշխատանք -289:

– ***2013 թվականի ընթացքում վարչության միջազգային պայմանագրերի փորձաքննության բաժնի կողմից կատարված աշխատանքների***

*Ըստ աշխատանքային ծրագրի՝*

***1-ին կետի՝*** հաշվետու ժամանակահատվածում կատարվել են հետևյալ աշխատանքները.

ա) «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքին համապատասխան ՀՀ միջազգային պայմանագրերի վերաբերյալ կարծիքների նախագծերի տրամադրում – 516:

բ) «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքին համապատասխան ստորագրված միջազգային պայմանագրերը ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու կամ դրանցում ՀՀ նոր օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտ ընդունելու անհրաժեշտության կամ դրա բացակայության մասին տեղեկանքների ներկայացում ՀՀ ԱԳՆ – 80:

***2-րդ կետի՝***

ա) Միջազգային պայմանագրերի վերաբերյալ վերապահում, հայտարարություն, այդ պայմանագիրն արդեն իսկ ստորագրած մյուս կողմի վերապահման, հայտարարության դեմ առարկության նախագծի տրամադրում կամ դրանց վերաբերյալ համաձայնությունների նախագծի տրամադրում – 2:

բ) ՀՀ արդարադատության նախարարի իրավաբանական կարծիքի նախագծի պատրաստում –16:

***3-րդ կետի՝***

Իրավական համագործակցության բնագավառում նախընտրելի պետությունների շրջանակի ուսումնասիրում –34:

***4-րդ կետի***

Այլ ընթացիկ աշխատանք – 344

**5-րդ կետի**

Չպլանավորված աշխատանք -276:

– ***2013 թվականի ընթացքում վարչության դատական հանձնարարությունների բաժնի կողմից կատարված աշխատանքների մասին***

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Դատական հանձնարարությունների բաժնի գործառույթների կատարման համար ՀՀ արդարադատության նախարարություն մուտքագրվող գործերը հիմնականում ստացվում են փաստաթղթային եղանակով: Mulberry համակարգով իրականացված աշխատանքները կազմում են բաժնի կողմից իրականացվող աշխատանքների 38.7%:

Հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր առմամբ Դատական հանձնարարությունների բաժին մուտքագրվել է 1200 գործ, որոնցից Mulberry էլեկտրոնային համակարգով՝ 335, իսկ փոստային եղանակով՝ 865: Mulberry էլեկտրոնային համակարգով՝ 335 գործերից 106-ը դիմումներ են քաղաքացիներից:

ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով բաժնի կողմից իրականացվում են ՀՀ միջազգային պայմանագրերի մասնակից օտարերկրյա պետություններին դատական վարույթի

ընթացքում գտնվող գործերով հանցագործություն կատարած անձանց հանձնման փաստաթղթերի փաթեթների ուսումնասիրության և հանձնման նպատակով ՀՀ արդարադատության նախարարի ՀՀ դատարաններ միջնորդություններ ներկայացնելու և դրանք դատարաններում պաշտպանելու գործառույթները։

Հաշվետու ժամանակահատվածում վերը նշված նպատակով բաժնի կողմից ուսումնասիրվել է 37 գործ, որոնցից հանցագործություն կատարած անձանց հանձնումն իրականացվել է 10-ի նկատմամբ, չի իրականացվել 27՝ անձի հանձնում, որոնցից 19-ը՝ ՀՀ քաղաքացիության հիմքով, 2-ը՝ հանձնումից հրաժարվել են օտարերկրյա իրավասու մարմինները։ Քննարկման փուլում են գտնվում 6 հանձնման փաստաթղթերի փաթեթներ։

ՀՀ արդարադատության նախարարի կողմից ՀՀ իրավասու դատարաններին ուղղված միջնորդությունները բաժնի աշխատակիցների կողմից ՀՀ իրավասու դատարաններում պաշտպանվել են 12 անգամ։

ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված կարգով բաժնի կողմից իրականացվում է նաև օտարերկրյա պետություններում պատիժը կրող ՀՀ քաղաքացի հանդիսացող դատապարտյալների պատժի մնացած մասը ՀՀ-ում կրելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում պատիժը կրող օտարերկրյա քաղաքացիների՝ իրենց քաղաքացիության երկրում պատիժը կրելու նպատակով ներկայացված դիմումների և դրանց կից փաստաթղթերի ուսումնասիրության և դատապարտյալների փոխանցման համար անհրաժեշտ համապատասխան գործառույթները։

Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից ուսումնասիրվել և ընթացք է տրվել օտարերկրյա պետություններում պատիժը կրող ՀՀ քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունում պատժի մնացած մասը կրելու նպատակով ներկայացված 97 դիմումի։ Նշված դիմումներից ՀՀ արդարադատության նախարարի կողմից մերժվել է 67-ը, բավարարվել է 19-ը, քննարկման փուլում են գտնվում 11-ը, փաստացի իրականացվել է 1-ի փոխանցումը։

Իրենց քաղաքացիության երկիր տեղափոխվելու ցանկություն է հայտնել ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող 27 դատապարտյալ։ ՀՀ արդարադատության նախարարի կողմից մերժվել է 12-ի փոխանցումը, քննարկվում է 3 դիմում։

Բաժնի կողմից կազմակերպվում է օտարերկրյա պետություններից ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված կարգով ՀՀ արդարադատության նախարարություն ուղարկված դատական հանձնարարությունների ուսումնասիրության և դրանք ըստ պատկանելության՝ համապատասխան մարմիններին կատարման ուղարկելու և դրանց կատարման աշխատանքները համակարգելու գործառույթի իրականացումը։

Այս կապակցությամբ, հաշվետու ժամանակահատվածում ընթացք է տվել թվով 326 դատական հանձնարարությունների, որոնցից 232-ը ստացվել են օտարերկրյա պետություններից, իսկ 94-ը՝ ՀՀ պետական մարմիններից։

Օտարերկրյա պետություններից ստացված 232 դատական հանձնարարություններից 112-ը ստացվել է Ռուսաստանի

Դաշնության իրավասու մարմիններից, 15-ը՝ Բելառուսի Հանրապետության իրավասու մարմիններից, 34-ը՝ Թուրքիայի իրավասու մարմիններից, 4-ը՝ Բուլղարիայի իրավասու մարմիններից, 10-ը՝ Լեհաստանի իրավասու մարմիններից, 1-ը՝ Չեխիայի իրավասու մարմիններից, 5-ը՝ Վրաստանի իրավասու մարմիններից, 14-ը՝ ՈՒկրաինայի իրավասու մարմիններից, 2-ը՝ Մոլդովայի իրավասու մարմիններից, 13-ը Գերմանիայի իրավասու մարմիններից, 4-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետության իրավասու մարմիններից, 1-ը՝ Տաջիկստանի Հանրապետության իրավասու մարմիններից, 1-ը՝ Թուրքմենստանի Հանրապետության իրավասու մարմիններից, 5-ը՝ Հունաստանի Հանրապետության իրավասու մարմիններից, 1-ը՝ Ղազախստանի Հանրապետության իրավասու մարմիններից, 1-ը՝ Շվեդիայի իրավասու մարմիններից, 1–ը՝ Կորեայի Ժողովրդական Հանրապետության իրավասու մարմնից, 2-ը՝ ԱՄՆ իրավասու մարմնից, 1-ը Բելգիայի իրավասու մարմնից, 5-ը Նիդերլանդների իրավասու մարմնից:

Հայաստանի Հանրապետության պետական մարմիններից ստացված 94 դատական հանձնարարություններից 62-ը ուղարկվել են Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմիններ, 6-ը Վրաստանի իրավասու մարմիններ, 3-ը Արաբական Միացյալ Էմիրություններ, 2-ը՝ ՈՒկրաինայի իրավասու մարմիններ, 1-ւը Ֆրանսիայի Հանրապետության իրավասու մարմիններ, 1-ը Հունաստանի իրավասու մարմիններ, 4-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետության իրավասու մարմիններ, 3-ը Բելառուսի Հանրապետության իրավասու մարմիններ, 1-ը Բուլղարիայի իրավասու մարմիններ, 1-ը՝ ԱՄՆ իրավասու մարմիններ: Թվով 6 դատական հանձնարարություններ վերադարձվել են ՀՀ նախաձեռնող պետական մարմիններին՝ դրանք համապատասխան միջազգային պայմանագրերի պահանջներին համապատասխանեցնելու համար:

2013թ. բաժնի աշխատակիցների կողմից 2013թ. հունիսին կազմակերպվել և իրականացվել են ՄԱԿ–ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի անդամ երկրների կոնֆերանսի կողմից ստեղծված կոնվենցիայի իրականացման վերահսկման մեխանիզմի օտարերկրյա փորձագետների և ՄԱԿ-ի Թմրամիջոցների և Հանցավորության դեմ պայքարի գրասենյակի ներկայացուցիչների հանդիպումները ՀՀ իրավասու մարմինների հետ:

2013թ. Դատական հանձնարարությունների բաժինը մասնակցել է ԱՊՀ արդարադատության նախարարների խորհրդի հոկտեմբերի 10-11-ին կայացած հերթական 8-րդ նիստի կազմակերպման աշխատանքներին: